թէ Ստեփանն Ֆրանկացեալ է՝ դատաստան արա, բայց նա ոչ լուաւ։ Մէհէմմէտ Փաշա կռուի ընդ Արապս 'ի կողմանս Նապլուսի, և սպանեալ զՇէյխս նոցա առաքէ զգլուխսն 'ի Կոստանդինուպոլիս։ Մուֆդին երթայ անդ ամբաստան լինիլ զնմանէ վասն խստութեան։ Նաւր բաղում Արապկօք ճիաւորօք և հետեւակօք անցին 'ի դրանէ Երուսաղէմի ընդ Խալիլցիս, եւ գնացին 'ի Նապլուս 'ի վերայ Մէհէմմէտ Փաշայի։ Հոկ. 10 Նաղր աղային տեղի և գորգ պատրաստեցին յեկեղեցին։ Հոկ. 30 նոր Նաղբրն եւ նոր վէքիլն Յովհաննէս արեղայն պահանջեն հաշիւ 'ի պապա Մինասէն։ Աղմուկ մեծ եւ բաղում վասն հաշուոյ 'ի մէջ վէքիլաց։ Նաղբրն գնացեալ առ դատաւորն ասդ արար նմա թէ նոր վէքիլ եկեալ է, կամի գալ տեսակցիլ ընդ ձեզ, որոյ եկեալ էին փոխանորդք Յունաց և Լատինաց։ Ապա չոքաւ Յովհաննէս առ դատաւորն, եհարց նմա թէ ի՞նչ ես, և նա ասէ, վէքիլ. ո՞ւր է հրամանագիր, պատասխանէ, չունիմ, այլ միայն գիր 'ի Հայոց։ Նոյ. 5, տարին զՄինաս վարդապետ 'ի դատարան, և դատաւորն հրամայեաց երթալ տեսանել զհաշիւն, և յետ տեսանելոյ զայն 46 քսակ պարտաւոր ցուցին զՄինաս վարդապետ։

Թէպէտեւ Աւետիք վարդապետ կարդեալ էր զՅովհաննէս վարդապետ վէքիլ, և զկարապետ Նաղբր, գիտել հրամտութեամբ զամենայն գործս վանաց, այլ 'ի տրանջել ժողովրդոց եւ 'ի յաճախել բամբասանաց 'ի մէջ ազգին, թէ զիա՞րդ այսքան մուտք և ելք աթոռոյն 'ի ձեռս առն միոյ կամ երկուց աւանդեալ կատարին։ առաքեաց և զՎրթանէս վարդապետ զհաւատարիմ իւր, Նաղր և Ոստիկան անուամբ, զի ամենայն ինչ խորհրդով և գիտութեամբ երիցն կատարեսցի, և մի ոք արասցէ զիրս ինչ արտաքոյ կամաց նոցին, և փոյթ կալցին վասն աղաւութեան Աթոռոյն 'ի պարտուց։ (Նամակք Աւետիքի)։

Յետ այնորիկ խնդրեաց Աւետիք վարդապետ զհաշիւն վանաց Ս. Յակոբայ 'ի Մինաս պապա կոչեցեալ միաբանէ, որ փոխանորդ էր Մինաս Պատրիարքի և խնամակալ վանաց, և տուեալ նորա զհաշիւն, ընկալաւ գիր 'ի դատարանէ առաջի վկայից, 'ի հաստատութիւն հաւատարմութեան իւրոյ։ Սակայն Աւետիք վարդապետ ոչ կամեցաւ